

## Տ. ՋԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆ

Ծնվել է 1972 թ. փետրվարի 17-ին Էջմիածին քաղաքում:

1979-89 թթ. սովորել է տեղի հմր. 9 միջնակարգ դպրոցում:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Հնագետ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կյանքն ու գործունեությունը» վերնագրով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996-99 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ՔԴՔԿ--ում:

1996 թ. հունիսի 12-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է «Թորգոմ Պատրիարք Գուշակյան» վարդապետական թեզը: